ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ՄԱՐՏԻ, 2018 թ.
№ 3 (1020)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՍԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՂԹԱՆԱԿՆ Է

«Ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն նախագահ» անվանակարգում հաղթեց Ներսիկ Մարգարյանը



Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ ամենամյա «Հայկյան-2017» մրցանակաբաշխությունը: Տարբեր անվանակարգերում մրցանակների արժանացան 2017 թվականին երիտասարդական ոլորտում իրենց լավագույնս դրսևորած և հետաքրքիր նախաձեռնություններով հանդես եկած երիտասարդները, երիտասարդական խմբերն ու կազմակերպությունները: Մրցանակներ շնորհվեցին նաև առանձին երիտասարդական ծրագրերին: «Ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն նախագահ» անվանակարգում մրցանակ շնորհվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանին:

«Սա միայն իմ հաղթանակը չէ, սա յուրաքանչյուր ուսանողի հաղթանակն է: Շնորհակալ ենք մեր կատարած աշխատանքը գնահատելու համար, ինչպես նաև հարազատ բուհիս եմ շնորհակալ՝ ուսանողական խորհրդին մշտապես աջակցելու և սատարելու համար»,- ասաց Ներսիկ Մարգարյանը:

➤2

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացված համահամալսարանական մանկավարժական օլիմպիադան՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին, երկար ժամանակ ակտիվ գործընթացի մեջ պահեց բուհի տարբեր ֆակուլտետների ու կուրսերի ուսանողներին, բացահայտեց նրանց մասնագիտական հմտություններն ու որակները: Երեք փուլով անցկացված օլիմպիադան լավագույնս կազմակերպվեց մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Աղուզումցյանի և մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ Նաիրա Մարտիրոսյանի ղեկավարությամբ, ինչպես նաև ամբիոնի մյուս բոլոր դասախոսների ակտիվ մասնակցությամբ:

➤3

Ավարտվեց կյանքի ևս մեկ շրջափուլ

Փետրվարի 26-ին Մանկավարժական համալսարանի Տարրական կրթության ֆակուլտետի «մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի մագիստրատուրայի 3-րդ կուրսի 51 ուսանողներ ավարտական դիպլոմներ ստացան:

«Ահա և ավարտվեց ձեր կյանքի կարևոր շրջափուլերից ևս մեկը և ձեր կյանքում սկսվում է մի նոր՝ ավելի կարևոր ու պատասխանատու շրջափուլ: Ես անչափ հպարտ եմ, որ այս տարիների ընթացքում լուրջ ձեռքբերումներ ունեցաք:

➤2

... ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՂԹԱՆԱԿՆ Է

➢1 «Հայկյան-2017» մրցանակներ են շնորհվել «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին», «Ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն նախագահ», «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին», «Լավագույն երիտասարդական գիտական նվաճում», «Ինքնատիպ երիտասարդական նախագիծ», «Ռազմահայրենասիրական լավագույն նախագիծ», «Լավագույն երիտասարդական հաղորդում, լրատվական նախագիծ», «Լավագույն միջբուհական ծրագիր», «Լավագույն երիտասարդական ՀԿ Երևան քաղաքում», «Լավագույն երիտասարդական ՀԿ մարզում», «Լավագույն երիտասարդական միջազգային ծրագիր» անվանակարգերում: Ավանդական անվանակարգերից բացի, շնորհվեցին նաև հատուկ մրցանակներ, որոնք մրցանակակիրներին հանձնեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Մրցանակաբաշխության ավարտին նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորեց բոլոր մրցանակակիրներին, և հույս հայտնեց, որ նրանց ստացած մրցանակները բաղադրիչներն են դառնալու հաջողությունների այն երկար շղթայի, որ երիտասարդները հետագայում էլ պետք է ունենան՝ ի փառս Հայաստանի և հայ ժողովրդի:

«Հայկյան» մրցանակաբաշխությունը սահմանվել է 2001 թվականին, այսինքն՝ այս մրցանակաբաշխությունը 21-րդ դարի զավակ է: Դուք էլ եք 21-րդ դարի զավակներ, 21-րդ դարը ձերն է, 21-րդ դարում դո՛ւք պետք է հասնեք հաջողությունների, 21-րդ դարում Հայաստանի պատիվը դո՛ւք պետք է պահեք, Հայաստանի հաջողության գրավականը դո՛ւք պետք է լինեք: Ապագան ձերն է, և դուք միշտ պետք է կարողանաք արժանավայել ու արժանապատիվ անցնել ձեր ճանապարհը»,-ասաց ՀՀ նախագահը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանն իր խոսքում կարևորեց երիտասարդների դերը մեր կյանքի բոլոր ոլորտներում. «Այսօր մրցանակ ստացողներից շատերն իրենց աշխատանքի շնորհիվ մեզ պարգևել են հպարտության պահեր: Այստեղ գտնվողներից շատերի համառությունից, նախաձեռնած գործի ծավալներից մենք զարմացել ենք: Ոմանք էլ աննկատ, գլուխը կախ իրենց մասնագիտական պարտքն են կատարել՝ չմտածելով որևէ գնահատանքի մասին: Ու բոլորը, վստահ եմ, ապրել, արարել են իրենց նպատակներն ու երազանքը կյանքի կոչելու հեռանկարով ու ամեն ինչ լավ լինելու տրամադրությամբ մեզ վարակելով»: Մրցանակաբաշխությունն ամփոփվեց գեղեցիկ համերգով:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Սոցիոլոգիական ֆակուլտետում փետրվարի 19-20-ը անցկացվեց 12-րդ միջազգային գիտական կոնֆերանս՝ «Սորոկինյան ընթերցումներ 2018: Սոցիալական անարդարությունները սոցիալական չափումներում. ժամանակակից աշխարհի մարտահրավերները» խորագրով:

Միջազգային գիտաժողովի անցկացումը կապված էր Սոցիալական արդարության համաշխարհային օրվա հետ, որը 2007 թվականից նշվում է ամեն տարվա փետրվարի 20-ին:

Հերթական գիտաժողովը նվիրված էր սոցիալական արդարության և անարդարության համաշխարհային սոցիոլոգիական վերլուծություններին: Գիտաժողովի աշխարհագրությունը լայն էր. մասնակցում էին և զեկուցումներով հանդես եկան Իսրայելի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՊՀ երկրների սոցիոլոգներ, ոլորտի ներկայացուցիչներ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարանը ներկայացնում էր Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը, ինչպես նաև օնլայն ձևաչափով՝ սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ամբիոնի դասախոս Գոհար Մկոյանը:

Փետրվարի 20-ին պրոֆեսոր Ա. Սահակյանը հանդես եկավ «Սոցիոմշակութային արժեքները Պ. Սորոկինի և Դ. Անհաղթի գիտական տեսություններում» զեկուցումով: Մոսկովյան բուհի Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ն. Գ. Օսիպովայի կարծիքով՝ Ա. Սահակյանը զեկուցման մեջ ներկայացրեց սոցիոլոգիայի ոլորտի հիմնախնդիրների հանդեպ իր ժամանակակից մոտեցումները, որը հիմք կդառնա երկու համալսարանների գիտամանկավարժական համագործակցության և, առաջին հերթին, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների և գործնական կապերի ընդլայնման համար:

ԶՈՒԳԱՀԵՌ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանն ընդլայնում է իր գործունեության հնարավորությունները՝ այն առավել հարմարեցնելով կրթական համակարգի և հանրակրթական դպրոցի պահանջներին. մանկավարժական համալսարանում նորույթ է միաժամանակ զուգահեռ կրթություն ստանալալու հնարավորությունը առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ու մագիստրատուրայի ծրագրերով, տարբեր մասնագիտություններով սովորող, ինչպես նաև այլ հավատարմագրված բուհերի ուսանողների համար: Նոր մշակված ընթացակարգի համաձայն առկա ուսուցման համակարգի սովորողները կարող են կրթություն ստանալ նաև Մանկավարժական համալսարանի հեռակա ուսուցման, իսկ հեռակայինը՝ առկա ուսուցման համակարգում:

«Նախկինում էլ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու մասին օրենքով կրթության առկա և այլ ձևերի զուգակցումը չէր արգելվում, սակայն այս ընթացակարգով սահմանվում է դրա ընդհանուր պայմանները. այն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով և կազմակերպվում կրեդիտային համակարգով, իսկ առարկայական տարբերություններն ու առարկաների առանձին բաժինները համարվում են ակադեմիական պարտքեր»,-ասաց ՀՊՄՀ պրոռեկտոր Միհեր Մելիք-Բախշյանը:

Հավելենք, որ զուգահեռ ուսուցմամբ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար դիմած անձը համապատասխան կրեդիտների առկայության դեպքում ազատվում է իր նախորդ կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և տվյալ կրթական ծրագրում առկա առարկաներից, ինչպես նաև պարտավորվում է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ համաձայն ՀՊՄՀ-ում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի:

Ավարտվեց կյանքի ևս մեկ շրջափուլ

➢1 Մենք հանգիստ խղճով ու հպարտ ենք ճանապարհում ձեզ դպրոց և վստահ ենք, որ ամեն տեղ բարձր եք պահելու մեր պատիվը: Հիշեք, որ ձեր առաջին տեղը դպրոցում է, և որ մենք միշտ պատրաստ ենք աջակցելու ձեզ»,-ասաց Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը՝ շրջանավարտներին հղելով իր ջերմ մաղթանքները:

Տարրական կրթության ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հեղինե Խաչատրյանն իր բարեմաղթանքները հղեց շրջանավարտներին՝ բուհում նրանց ուսումնական մեկնարկի և ավարտի համեմատության մեջ մեծ զարգացում նկատելով. «Իսկապես բոլորդ խանդավառված եք մանկավարժական մտածողությամբ և մոտեցումներով, դա նկատելի էր հատկապես մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքում, բայց ես հորդորում եմ երբեք չհանգստանալ ձեռք բերածով, դասարան մտնել մշտապես պատրաստված և տարիների ընթացքում ապահովել մասնագիտական աճ և զարգացումներ»:

Դեկանը հորդորեց ակտիվ լինել աշխատավայրում, լինել արհեստավարժ, որպեսզի վայելեն երեխաների սերը, ապա բարի երթ մաղթեց բոլորին և հաջողություններ անձնական ու մասնագիտական կյանքում:

Շրջանավարտներին բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեց նաև մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը:

Շրջանավարտներն էլ երդվեցին՝ պատվով կրել հայ ուսուցչի կոչումը, դպրոց մտնել հայրենիքի հանդեպ պարտքի ու պատասխանատվության զգացումով, լինել բարի և արդարամիտ, իր գործին նվիրված մարդիկ և հայրենիքի համար դաստիարակել բարեկիրթ քաղաքացիներ:

նրանք իրենց երեխաների առաջին ուսուցիչներն են լինելու և դաստիարակողները, փաստեց, որ Մանկավարժականը շատ է բարեփոխվել, և դրանում ուսանողներն իրենց լուման ունեն, ապա վստահեցրեց, որ նման ձևաչափով օլիմպիադայի կազմակերպման առաջին փորձն էր, բայց այն շարունակական է և միտված է ընդլայնելու մասնակիցների աշխարհագրությունը:

Ուսանողների համար առաջին հանրապետության կայացման, նրան նախորդած հերոսամարտերի պատմությունը և այդ համապատկերում հայ բանը:

Դասախոսները գոհ էին իրենց աշխատանքի արդյունքից, ուսանողները՝ հպարտ, որ դասախոսները ոչ միայն իրենց կարողությունների դրսևորման հնարավորություն ընձեռեցին, այլև արժևորեցին դրանք: Մրցանակային տեղերն ու անվանակարգերը, ազգային խորհրդանիշներով հիանալի մրցանակներն ու շնորհակալագրերը գտան իրենց արժանի տերերին. առաջին տեղերը զբաղեցրին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտ Հովհաննիսյանը և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Գևորգյանը, 2-րդ տեղը՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Ավետիսյանը և Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Հեղինե Արզումանյանը, 3-րդ տեղին արժանացան Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Մանե Աբելյանը և Օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սեյեդեհնասիմ Սայեդմօջթաբա Ֆաթեմին:

«Ամենաազնիվ» քարոզը ներկայացնելու համար մրցանակն ստացավ Բանասիրական ֆակուլտետի հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հովհաննես Սարգսյանը, իսկ լարանի համակրանքը շահելու մրցանակը բաժին հասավ Օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալբերտա Պիրոևային:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

➢1 Բակալավրիատի ուսանողները լրացրին մանկավարժական թեստեր, լուծեցին մանկավարժական տարբեր իրավիճակներ, առանձնացրին մանկավարժության արդի հիմնախնդիրներ՝ հիմնավորելով արդիականությունն ու հանդես գալով առաջարկություններով:

Մագիստրոսներին առավել բարդ առաջադրանքներ տրվեցին. մանկավարժական իրավիճակների լուծումներից զատ նրանք ներկայացրին ՀՀ-ում առկա մանկության ժամանակակից հինախնդիրներ, առաջարկեցին լուծման տարբերակներ, մշակեցին դրանց իրականացման մանկավարժական պայմաններ: 3-րդ փուլի մասնակիցները պատրաստեցին նաև «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով քարոզներ:

Համահամալսարանական մանկավարժական օլիմպիադայի արդյունքներն ամփոփվեցին Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում: Փետրվարի 21-ին օլիմպիադայի մասնակից ուսանողները պրոֆեսոր Սիդա Թոփուզյանի և ամբիոնի դասախոսների ուղեկցությամբ այցելեցին Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր:

Ուսանողների համար համալիրի Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում կազմակերպվեց հրաշալի էքսկուրսիա: Էքսկուրսավարը ուսանողներին հանգամանորեն ծանոթացրեց թանգարանում ցուցադրվող ցուցանմուշներին՝ հայ էթնոսի մշակութային ժառանգությանը վերաբերող պատմամշակութային արժեքներին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, որոնք օգնում են ճանաչելու և գնահատելու մեր անցյալը և ավանդական արժեքները: Ուսանողները մեծ հետաքրքրությամբ լսեցին թանգարանում պահվող՝ Հայաստանի հնադարյան շրջանի եզակի առարկաների, աշխատանքային գործիքների, հայկական գորգերի, ազգային տարբեր ավանդույթների և դրանք խորհրդանշող իրերի պատմությունը: Այնուհետև թանգարանի դահլիճում անցկացվեց օլիմպիադայի հաղթողների պարգևատրում:

«Առաջին հանրապետության 100-ամյակը հայ ժողովրդի կյանքի առաջին և ամենակարևոր շրջադարձային տարեթիվն է և մեզ պատիվ բերող տարեդարձ»,-ասաց պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը: Նա խորհրդանշական համարեց հայկական առաջին հանրապետության մեկդարյա հոբելյանի առթիվ կազմակերպված օլիմպիադայի արդյունքների ամփոփումը հայ ժողովրդի հերոսամարտի պատմության հուշահամալիրում. չլիներ Սարդարապատի հերոսամարտը՝ չէր լինի Հայաստանը, և հայ ժողովրդի կործանումն անխուսափելի կլիներ:

Ամբիոնի վարիչը ուսանողներին հորդորեց լավ սովորել, կարևորեց մանկավարժական գիտությունը հատկապես աղջիկների համար, որովհետև մեծ քաղաքական գործիչ Արամ Մանուկյանի ազգանվեր գործունեությունը ներկաների համար գաղտնազերծեց հայկական առաջին հանրապետության մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր Սամվել Պողոսյանը:

«1918 թվականի մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդին հնարավորություն տվեցին ապրել և գոյատևել, սակայն մենք պետք է կարողանանք դասեր քաղել մեր և՛ հաղթանակներից, և՛ պարտություններից, այսօր արդեն շարունակելով զարգանալ և հզորանալ»,-ասաց պատմագիտ Հովհաննիսյանը և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Գևորգյանը, 2-րդ տեղը՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Ավետիսյանը և Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Հեղինե Արզումանյանը, 3-րդ տեղին արժանացան Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Մանե Աբելյանը և Օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Սեյեդեհնասիմ Սայեդմօջթաբա Ֆաթեմին:

Օլիմպիադային ակտիվ մասնակցության համար շնորհակալագրերի արժանացան նաև Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավր 3-րդ կուրսի ուսանողուհիներ Սոնա Հովհաննիսյանը և Անի Վարդանյանը, ինչպես նաև Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Իլոնա Խամբեկյանը:

Դասախոսների, ուսանողների թանգարանի աշխատակիցների համար իսկական անակնկալ էին պատրաստել ամբիոնի հենակետային՝ Երևանի N 124 դպրոցի մի խումբ աշակերտներ՝ դասղեկ Անահիտ Հովակիմյանի և ուսուցիչ Շուշան Ալեքսանյանի գլխավորությամբ: Նրանց հայրենաշունչ ու ոգեղեն ասմունքը, երգն ու պարը գեղեցիկ զգացողություններ հաղորդեցին ներկաներին՝ յուրովի ամբողջացնելով օրվա խորհուրդը և իմաստավորելով աշակերտ-ուսանող-մանկավարժ շարունակական կապը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Լուսանկարները՝
Էլեն Գասպարյանի
Կուլտուրայի ֆակուլտետի
գեղարվեստական լուսանկարչության մասնագիտության 1-ին կուրս

Փետրվարի 15-ին նշվում է Սերբիայի պետականության օրը: Այդ առիթով Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կազմակերպվեց միջոցառում՝ մտավորականության ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանը: Ելույթը «Հայ-Սերպական Բարեկամութեան Տօն» վերնագրով տպագրվել է Լիբանանի «Զարթօնք» թերթում:

Հայ-սերբական բարեկամություն

Եթե հրաշքով կենդանի լինեին մեր երկու մեծ բանաստեղծները՝ Հովհաննես Թումանյանը և Ավետիք Իսահակյանը, ապա նրանք շատ երջանիկ կլինեին, որ կա Բաբկեն Սիմոնյանի նման մտավորական, որն այդքան մեծ նվիրումով շարունակում է իրենց սկսած գործը՝ ամրապնդելով երկու բախտակից ժողովուրդների՝ սերբերի ու հայերի բարեկամությունը: Հայաստանում Սերբիայի պատվո հյուպատոսը, հիրավի, խիստ կարևոր առաքելություն է իրականացնում: Նա անցյալ ուսումնական տարում եկել էր մանկավարժական մայր համալսարանի բանասիրական ֆակուլտետ և մեր ուսանողությանը ներկայացրեց տեսաֆիլմ՝ նվիրված Սերբիայի հանրապետությանը, սերբ ժողովրդի ազատասիրական ոգուն: Տեսաֆիլմն ուղեկցվում էր սերբական հայրենասիրական երգերով, որոնք համակում էին իրենց գեղեցիկ մեղեդիներով: Նրա դասախոսությունը խիստ անհրաժեշտ էր այսօրվա հայ երիտասարդությանը՝ առողջ հայրենասիրությամբ տոգորվելու համար: Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանի ջանքերով երկկողմանի դասախոսություններ եղան skype-ով:

Սերբիայի անցյալի մասին լսեցինք դասախոսություն, որը սերբերենից թարգմանում էր Բաբկեն Սիմոնյանը, և ի պատասխան դրան՝ Չեռնոգորիայի աստվածաբանական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողների համար ես կարդացի դասախոսություն, որին ներկա էր նաև համալսարանի ռեկտորը: Դասախոսությունը նվիրված էր պատմահայր Մովսես Խորենացուն, այն ռուսերենից թարգմանում էր սերբ երիտասարդ հայագետ Պրեդրակը, որն անպայման կդառնա առաջնակարգ հայագետ:

Ուզում եմ հիշեցնել, որ Հովհաննես Թումանյանը ռուսերենից թարգմանել է սերբական էպոսի մի քանի հատվածներ: Ես ծանոթ եմ սերբական էպոսի ռուսերեն թարգմանությանը և զարմանալի նմանություններ եմ նկատել սերբական էպոսի և հայկական «Սասնա ծռերի» կամ «Սասունցի Դավթի» միջև: Հատկապես իրենց քաջությամբ, ազնվությամբ, հայրենասիրությամբ շատ նման են երկու էպոսների գլխավոր հերոսները՝ Մարկոն և Սասունցի Դավիթը:

Սերբական վիպերգի մեջ պատմվում է, թե ինչ է ուղարկել Թուրքիայի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն: Քրիստոնյա պատրիարքի խորհրդով նա ռուսական ցարին ուղարկում է սերբական սրբություններից՝ Կոստանդին կայսեր թագը, Ոսկեբերանի շուրջառը, Սերբիայի հերոս Լազար արքայի խաչանիշ դրոշը:

Ղուշբեգի փաշան սուլթանին բացատրում է, թե այդ ընծաներով սուլթանը հզորացնելու է Մոսկովի ցարին: Սուլթանն իր ենիչերներով դեսպաններից խլում է իր ուղարկած նվերներն ու սպանում է ծեր պատրիարքին: Էպոսի մի հատվածում պատկերվում է, թե ինչպես Մարկոն վերացնում է սերբերի վրա դրված պսակի հարկը, և սերբ աղջիկներն ամուսնանում են ազատ ու համարձակ: Սերբերը հիմա էլ ունեն հարուստ գրականություն և «Иностранная литература» ամսագիրը հաճախ է տպագրում սերբ գրողների երկերը: Սերբ ազգը հպարտանալու իրավունք ունի. 1961 թվականին սերբ վիպասան Իվո Անդրիչը գրականության գծով ստացել է Նոբելյան մրցանակ:

Բաբկեն Սիմոնյանի հրատարակած գրքերը, սերբ ժողովրդի ազատագրական ոգին ներկայացնող տեսաֆիլմերը, դասախոսությունները այսօր խիստ արդիական են և անհրաժեշտ են հայ երիտասարդությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ

Այդ կիթառն ինձ դարձրեց ճանաչված...

«Ութ տարեկան էի, բակային ճամբար էի հաճախում, թաղի տղաներով ձայններս գլուխներս գցած երգում էինք... Մեր թաղի ամենալավ երգողը ես էի...

Այդ տարիներին ակորդեոնը շատ մոդայիկ էր, և ես մորս ասացի, որ ակորդեոն գնի ինձ համար: Մայրս ասաց, որ այդ գործիքը շատ թանկ է. նա որոշեց ինձ համար գնել ամենաէժան երաժշտական գործիքը՝ կիթառ, որն արժեր 6 ռուբլի 10 կոպեկ: Այդ կիթառը ինձ դարձրեց ճանաչված»,-ասաց երգիչ, երաժիշտ Հարություն Փամբուկչյանը՝ Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճի բեմում վերապրելով իր կյանքի տարբեր հանգրվանների դեպքերն ու իրադարձությունները, մանկության կարոտներն ու գույները:

«Ժամանակին, երբ քաղաքային ֆոլկը գտնվում էր ակորդեոն, դհոլ, կլառնետ գործիքիների ազդեցության տակ, հենց նրա շնորհիվ այն ձեռք բերեց նոր որակ. Հարութ Փամբուկչյանն իր գործի հեղափոխականն է»,- ասաց բուհի երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը:

Մանկավարժական համալսարանի ուսանողները երկար կհիշեն սիրված ու ճանաչված երգչի հետ պարզ, անկեղծ ու անբռնազբոս այդ հանդիպումը: Նա իրենց ծնողների ու նաև նրանց ծնողների սերնդի լեգենդներից է, ում երգերի ներքո նրանք մեծացան ու նաև գնահատեցին հայ երգարվեստը:

«Ձախ» Հարութը, ինչպես կոչել էին նրան ձախ ձեռքով կիթառ նվագելու համար, (մի անգամ լրագրողներից մեկը նրան հարցրել է՝ Դուք ձախորդ Հարո՞ւթն եք), ծնվել ու մեծացել է Երևանում («Երևանում եմ մարդացել»- Հ.Փ.), սովորել է Նոր Արեշի N 43 դպրոցում, ապա Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Ծնողները շատ էին ուզում, որ Հարութը նկարիչ դառնար, բայց նա գնաց երգի ճանապարհով...

Տարիներ հետո ընտանիքի հետ հեռացել է Լիբանան, այնտեղից էլ ԱՄՆ՝ հայաշատ Լոս Անջելես: Արդեն 44 տարի ապրում է Ամերիկայում, սակայն նրա երգերը հայրենիքի, Երևանի ու հայ մարդու մասին են...

«16-17 տարեկան տղաներ էինք, հրապուրված էինք արևմտյան երգիչների ու խմբերի կատարումներով՝ Ազնավուր, Ադամո, Թոմ Ջոնս, Սինատրա, ամերիկյան ջազ...: Մենք երգում էինք նրանց երգերը՝ երբեմն չհասկանալով ինչի մասին են դրանք..., և երևանյան յուրաքանչյուր համերգից հետո խմբի տղաներով հայտնվում էինք քաղմասում՝ «բուրժուական» երգեր կատարելու համար»:

Հայրենիքից հեռու նա երբեք չմոռացավ իր հայրենիքը, սիրելի Երևանը, արմատները, առաջին մկրտությունը երգի ասպարեզում: Երկար տարիներ բռնապետական ռեժիմն արգելում էր նրա մուտքը հայրենիք, բայց տարիներ հետո, երբ վերադարձավ, 10 օր շարունակ նրա համերգները լեփ-լեցուն դահլիճներում ու ստադիոններում չգերազանցված ռեկորդ սահմանեցին:

«Անչափ լավ զգացողություններ ունեմ, որ հանդիպել եմ այսպիսի երիտասարդների»,-ասում է Հարութն ու խոստովանում, որ իր մշակութային ակունքը Հայաստանն է, իր հաջողության գաղտնիքը՝ հայ գուսանական ու դասական երգերից սնվող իր արվեստը...Հպարտ է, որ հայ է, որ կարողանում է ժողովրդից վերցրածն անցկացնել իր միջով ու նոր զգացողություններով հարստացրած երգերը հետ վերադարձնել ժողովրդին:

Երգիչը ցավով նկատում է, որ այսօր Հայաստանում քաղցրահունչ մելիզմներով թուրքական ու պարսկական երաժշտությունը գրավում է հայ երգիչներին, երիտասարդներին:

«Մեր երգիչները սիրե՞լ, թե՞ սիրո մասին երգել չգիտեն» հարցին Հ. Փամբուկչյանը պատասխանեց՝ այս սերնդի երգերը կարծես մեկը գրած լինի...

«Անսխալ մարդ չկա, ես էլ եմ երբեմն սխալվել, բայց կարողացել եմ գտնել ինձ, իմ երգն ու ոճը, իմ ասելիքը...Եվ ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ, որ կարողանում եմ իմ հանապազօրյա հացը վաստակել սիրածս մասնագիտությամբ»:

Հ. Փամբուկչյանը կարողացավ բավարարել դահլիճում հավաքված ուսանողների հետաքրքրասիրությունը՝ սիրով պատասխանելով նրանց բոլոր հարցերին:

«Պետք է անկեղծ լինես նախ ինքդ քեզ հետ, ապա ժողովրդի հետ: Եթե կա մեկը, ումից սովորել եմ՝ դա Շառլ Ազնավուրն է, ում համերգներից ոչ մեկը բաց չեմ թողնում: Համաշխարհային երգարվեստի տաղանդավոր ներկայացուցիչներից պետք է կարողանաս վերցնել այն, ինչ օգտակար է, ոչ թե նմանվել նրանց:

Համո Սահյանի բառերով և Նարեկ Դուրյանի նոտագրած երաժշտությամբ երգը ձայնագրվել է Լոս Անջելեսի սիմֆոնիկ նվագախմբի հետ... Հայրս կասեր՝ եթե պատերազմ ես գնում՝ զենքդ վերցրու հետդ...Երգի ասպարեզն էլ իմ պատերազմն է... Ես սիրել եմ նկարել ու քանդակել, բայց գնացի երգի ճանապարհով... Թերևս գեներն իրենց գործն արել են. մայրս հիանալի երգում էր Կոմիտաս և աշուղական երգեր...

...Երգը միայն սկսելը չէ, պետք է կարողանալ շարունակել ու պայքարել, որպեսզի կարողանաս միշտ մնալ պատնեշի վրա...

Կանքը ինձ համար նպատակ է՝ լինել ազնիվ հայրենիքիս ու անցյալիս հանդեպ...

Ես գտել եմ իմ հոգին՝ իմ երգը և Աստծո կամոք հաջողել եմ իմ ասպարեզում: Ես շատ եմ սիրում երգել, երգը դպրոցի նման ուսուցանող է, այն մարդուն դարձնում է բարի...»:

Հանդիպման վերջում Հարություն Փամբուկչյանը երգերի մի փունջ կատարեց՝ ուսանողներին նվիրելով իր հոգու սերն ու բարությունը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

Ես գրկում եմ ծառը այնքան՝ մինչև Վերանում է սահմանն իմ ու ծառի միջև: Ես հղկում եմ քարը այնքան՝ մինչև Վերանում է սահմանն իմ ու քարի միջև: Ես հղկում եմ քարը այնքան՝ մինչև Հայտնվում է Աստված իմ ու քարի միջև:

ԵՍ ՊԱՐԶԱՊԵՍ ՉԵՍ ՀԱՆՁՆՎՈՒՄ...

- Կպատմե՞ք Ձեր մասին...

- Ծնվել եմ Սպիտակի Մեծ Պարնի գյուղի մեր գլխատանը, որը շինել էր պապս: Երկրաշարժից հետո մինչև հիմա էլ Սարիղամիշից բերած գերանները կանգուն են... Ծնողներիս 13 զավակներից ես 13-րդն եմ: Եղբայրներիցս երկուսը մասնակցել են Երկրորդ Համաշխարհային պատերազմին.1918 թվականին ծնված եղբայրս անհայտ կորավ, չվերադարձավ պատերազմից, մյուսը, որ 1924 թվականին էր ծնվել, վերադարձավ, ծառայության անցավ Լենինականում և կամաց-կամաց ընտանիքը տեղափոխվեց Լենինական: Նրանցից միայն ես բարձրագույն կրթություն ստացա: Հետագայում մեր ընտանիքը Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղից տեղափոխվեց Լենինական...Դպրոցն ավարտել էի 15 տարեկանում: 1958 թվականի մի օր ես նստեցի բանվորական գնացք՝ էլեկտրիչկա, և եկա Երևան, որ գործերս տամ Երևանի պետական համալսարան: Գնացքը առավոտյան ժամը 6-ին էր հասնում Երևան, և ես Բանասիրականի սև շենքի դռները փակ գտնելով, Աբովյան փողոցով իջա հրապարակ:

- Իսկ ինչպե՞ս եղավ, որ փոխեցիք Ձեր մտադրությունը:

- Հայտնի լեզվաբան Վաղարշակ Քոսյանի հետ պատահական հանդիպումը հրապարակում փոխեց իմ մտադրությունը, և ես գործերս հանձնեցի Մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետ:

- Հիշո՞ւմ եք Ձեր առաջին բանաստեղծությունը:

- 13 թե 14 տարեկան էի, երբ Արթիկի թերթում տպագրվեց իմ առաջին բանաստեղծությունը: Խմբագիրը Ալբերտ Հովհաննիսյանն էր, մի հրաշալի մարդ, ով մեծ համակրանք ուներ պոեզիայի և գրականության հանդեպ: Հիշում եմ՝ բանաստեղծությունը մորս էր նվիրված, բայց չեմ հիշում ո՛չ բանաստեղծությունը, ո՛չ էլ գիտեմ, թե որևէ արխիվում պահպանված է:

- Գիտե՞ք, Եսենինին նվիրված Ձեր բանաստեղծությունը դպրոցական տարիներին ես միշտ ներկայացրել եմ աստմունքի մրցույթներում...

- Դե որ հիշեցիր, պատմեմ մի գեղեցիկ հուշ կապված «Եսենինին» բանաստեղծության հետ: Լոնդոնում 2012 թվականին անցկացվեց բանաստեղծների համաշխարհային օլիմպիադա... Իմ բանաստեղծություններից մեկը տպագրվել էր «Աշխարհի երևելի պոետները» անգլերեն լեզվով մատենաշարում, այդպես իմ մասին իմացել էին և հրավիրեցին. 200-ից ընտրել էին 5 հոգու: Փարիզի «Նյու Յորք թայմսից» զանգեցին, կես ժամ հարցազրույց անցկացրին, հետո ամսագրի շապիկի վրա դրել էին իմ լուսանկարը Խոր Վիրապի համապատկերի վրա աղավնիներ բաց թողնելիս, իմ հարցազրույցից մի հատված էլ՝ շապիկի ներքևի մասում: Հետո ուղղաթիռները շրջում էին Թեմզայի վրա և ուղղաթիռներից Եսենինին նվիրված իմ բանաստեղծությունը սփռում էին ներքև: Ինձ խնդրեցին «Եսենինին» բանաստեղծությունը հայերեն արտասանեմ՝ իրենց ֆոնդում պահելու համար:

- Հրանտ Մաթևոսյանի հետ Մանկավարժականում սովորելու տարիների՞ն սկսվեց Ձեր ընկերությունը:

- Հրանտը ինձանից 5 տարով մեծ էր, բայց ավարտեցինք մեկ տարվա տարբերությամբ: Ես չկարողացա «ձգել» համալսարանական իմ վերջին տարվա ուսումնառությունը և թողեցի համալսարանը:

Հրանտի հետ մենք 40 տարվա ընկերներ էինք. այդ ընկերությամբ շատ էինք հպարտանում...

- Հայ պոեզիայի անցյալն ու ներկան... Ի՞նչ կասեք դրա մասին: Այսօր գրքեր են տպագրում և՛ տաղանդավորները, և՛ անտաղանդները...

- Սկզբում զարմանում էի, հետո դադարեցի զարմանալ

Իմ առաջին գրքի տպագրությունից սկսած Երևանի հրապարակի թիվ 1 գրախանութում հերթեր էին գոյանում...Երբ ինձ ասացին այդ մասին, ես ամաչեցի: Ժողովուրդը սիրեց իմ պոեզիան բարեբախտաբար, հենց ժողովրդի սիրո շնորհիվ ես կարողացա խուսափել գրաքննադատներից: Իսկ իմ «Ռեքվիեմը» երկու տարի թույլ չէին տալիս տպագրել, երկու տարի իմ ճանապարհը եղել է՝ կենտկոմ-գլավլիտ-մամուլի տուն-հրատարակչություն...

Հրանտի հետ մենք 40 տարվա ընկերներ էինք. այդ ընկերությամբ շատ էինք հպարտանում...

- Հայ պոեզիայի անցյալն ու ներկան... Ի՞նչ կասեք դրա մասին: Այսօր գրքեր են տպագրում և՛ տաղանդավորները, և՛ անտաղանդները...

- Սկզբում զարմանում էի, հետո դադարեցի զարմանալ

Իմ առաջին գրքի տպագրությունից սկսած Երևանի հրապարակի թիվ 1 գրախանութում հերթեր էին գոյանում...Երբ ինձ ասացին այդ մասին, ես ամաչեցի: Ժողովուրդը սիրեց իմ պոեզիան բարեբախտաբար, հենց ժողովրդի սիրո շնորհիվ ես կարողացա խուսափել գրաքննադատներից: Իսկ իմ «Ռեքվիեմը» երկու տարի թույլ չէին տալիս տպագրել, երկու տարի իմ ճանապարհը եղել է՝ կենտկոմ-գլավլիտ-մամուլի տուն-հրատարակչություն...

70-ականներին գրած մի բանաստեղծություն ունեմ՝ «Ոգեղեն հաց» վերնագրով: Անթիլիասի եկեղեցու ճեմարանում մի դասագիրք հրատարակեցին «Ոգեղեն հաց» վերնագրով, իմ բանաստեղծությունների շարքն էլ ուղեկցվեց տեսուչի խոսքով, ուր նա ինձ համարում էր մեր օրերի Նարեկացի...Նախանձողներ եղան... Իմ այդ բանաստեղծության մասին լավ գնահատականներից զատ եղան նաև քննադատական հետապնդումներ... «Ո՞ւր է նայում այս հոռետես մարդը»-գրեցին, և մեկուկես տարի բանաստեղծությունն արգելվեց.... Իսկ Սերո Խանզադյանը այդ դասագրքից անկախ, գրեց. «Կարդացի՝ շոշափելով Նարեկացու հանճարեղ մատները...»:

Այդ տարիներին, երբ ուզում էին որևէ հեղինակի ստեղծագործությունների տպագրությունն արգելել՝ վրան գրում էին «Վերջին փոստից»...և պետք է նրան աքսորեին... Այդպես «Սովետական Հայաստան» թերթը իմ ստեղծագործությունների վրա գրեց «Վերջին փոստից»... Դադարեցին տպագրել իմ բանաստեղծությունները, բայց երկու տարի անց նույն թերթը նորից տպագրեց իմ գործերը...Կարծում եմ ինձ փրկեց ժողովրդի սերը...

- Դուք պայքարո՞ղ մարդ եք...

- Ո՛չ, ես խորշում եմ այդ բառից, ես ասում եմ՝ ես պայքարող չեմ, պարզապես չեմ հանձնվում...

- Բաց քո կեղևը ծառ, առ ինձ կեղևիդ մեջ... Սա ցանկությո՞ւն է, զգացողությո՞ւն, որ ժամանակ առ ժամանակ ունենում եք... Այդ չհանձնվելու ըմբոստությունն ու կամքը նկատելի է «Կեղևդ բաց արա» և ուրիշ բանաստեղծությունների մեջ...

- Այո, ճիշտ եք նկատել.

Ես կծգվեմ քեզ հետ,
Ես կճկվեմ քեզ հետ
Ու հողմերի ձեռքից
Ես կփրկվեմ քեզ հետ...

Կեղծիքը և խոսքի հակասությունը դժվար ժամանակներում օգնում էին միջոցներ գտնել արտահայտվելու... Եվ, բարեբախտաբար, այդ միջոցները գտնվում էին ...

- Ի՞նչ չեք հասցրել անել, որ մնացել է որպես անկատար իղձ, երազանք, ի՞նչ եք հասցրել ու ինչի՞ համար եք ափսոսում...

- Երկու վեպ հրատարակել եմ, դրանք ընդգրկում են մեծ ժամանակահատվածներ՝ երկրաշարժից մինչև Ղարաբաղյան հակամարտություն ...Իմ նպատակը ոչ թե քննադատելն է, այլ Ղարաբաղյան պատերազմի մասին ճշմարտությունը գրելը գեղարվեստորեն, որ հետո պատմաբանները չգրեն, թե Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք Ղարաբաղն անկախացավ...

Լույս է տեսել «Գերդաստան» վեպը... Գերդաստանը որ մնա՝ պետությունն ինքն էլ կմնա...

Մի մրցանակ ունեմ՝ «Звезди СНГ» Մոսկվայի մշակույթի բարձրագույն հիմնադրամի մրցանակն է, որ տրվում է տարբեր ոլորտի մարդկանց ...Արքայական ընդունելություն էր, բայց, ցավոք, Ադրբեջանին հաճոյանալու համար այդ մրցանակը տվեցին նաև Ալիևի կնոջը:

- Մենք հեռացե՞լ ենք մարդկային բարոյականությունից....

- Եկեք շատ չբացարձակացնենք...Ես գիտեմ մարդկանց, ...Ուր առաջնորդում ես մարդկանց, այնտեղ էլ գնում են...

Երբ երկրի հիմքերը քանդում են, դրանց վրա կարտոնե պատեր չես կարող տեղադրել...Լևոն Տեր-Պետրոսյանի ստեղծածը քարուքանդ անելն էր...

Կարծում եմ հիմա հիմքերը դնելու ժամանակն է...

Զավեշտալի է, բայց բոլոր կուսակցություններն իրենց ծրագրի իրականացման համար ընտրել են Ե. Չարենցի «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» բնաբանը, բայց, ցավոք, նրանք բոլորը պայքարում են ոչ թե ժողովրդին միավորելու, այլ իշխանության համար...

- Ժամանակին դուք էլ էիք մի կուսակցության հարում...

- Այո, բայց ես կաղապարների մեջ չեմ տեղավորվում...

- Անգամ աշխատեցիք ՀՀ նախագահի խորհրդական...

- Ես չգիտեմ իմ աշխատանքով ինչ օգուտ տվեցի, բայց թե ի՞նչ ստացա.այդ տարիներն ինձ համար իսկական դպրոց էին...Կարծում եմ ինքս ինձ համար հայտնաբերեցի, ավելին՝ պեղեցի խորխորատները...

- Կյանքում ի՞նչն եք համարում ամենակարևորը:

- Աստվածակերտ նկարագիրը չկեղծելը, նախնական աստվածակերտ նկարագիրն անխաթար պահելը...

- Հավատո՞ւմ եք մեր երկրի ու ժողովրդի ապագային:

- Իմ ներսը թույլ չի տալիս, որ ես հուսահատվեմ...Եթե չհավատայի, չունենայի այդ ապագայի լուսավոր տեսիլքը, ուրեմն ապրելն իզուր էր...

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հայտնաբերեցին լավագույններին

Մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել էր օլիմպիադա՝ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից: Օլիմպիադայի 2-րդ փուլն անցկացվեց Մանկավարժական համալսարանում, որին մասնակցում էր ավագ և միջնակարգ դպրոցների 11-12-րդ դասարանների շուրջ 150 աշակերտ:

Օլիմպիադայի հարցաշարերը կազմվել էին ֆակուլտետի համապատասխան ամբիոնների դասախոսների կողմից, որոնք ընդգրկված են եղել հանրապետական մի շարք օլիմպիադաների կազմկոմիտեներում:

Օլիմպիադայի արդյունքներն ամփոփվեցին, և մասնակիցները ստացան հավաստագրեր, իսկ 1-10-րդ տեղերը զբաղեցրածները՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի բաժիններում սովորելու դեպքում կստանան ուսման վարձի զեղչ՝ 10-50 %-ի չափով:

«Օլիմպիադաների կազմակերպման նպատակն է հայտնաբերել գիտության տվյալ ոլորտի լավագույններին, հնարավորություն տալ կատարելագործվելու և ուսումը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում»,-ընդգծեց ֆակուլտետի դեկան Գագիկ Դեմիրխանյանը, հավելեց նաև, որ այս օլիմպիադայի արդյունքում ՀՊՄՀ-ում ներդրված Google Classroom հարթակում մասնակիցները հնարավորություն կունենան ակտիվ շփվել և կապ պահել Մանկավարժական համալսարանի հետ:

Ֆակուլտետի դեկանը շնորհավորեց բոլորին՝ նկատելով, որ օլիմպիադաներում կարևորը մասնակցությունն է: Աշակերտներին շնորհավորեց նաև մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Համլետ Միքայելյանը և նվիրեց իր հեղինակած գրքերից:

«Հրաշալի է, որ այս տարիքում ունեք նման ձեռքբերումներ, իսկ մարդու կյանքում ամենակարևորը նաև մասնագիտության ընտրությունն է: Ուսուցիչ լինելը առաքելություն է, ուսուցիչն է ձևավորում մարդու հոգևոր ներաշխարհը: Երջանիկ է այն մարդը, ով իր կյանքի ընթացքում ունեցել է գեթ մեկ ճշմարիտ ուսուցիչ, ով սովորեցրել է իրեն ապրել, սիրել, բարի լինել...»,- ասաց Համլետ Միաքելյանը և հավելեց, որ այսօր մեզ պակասում են լավ ուսոցիչներ, քանզի մարդկության ապագան խելքի մենամարտի մեջ է:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական խումբը աշխատանքային այցով եղավ ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանում:

Արդեն երկու տարվա համագործակցության շրջանակներում պատրաստվում է մեթոդական ձեռնարկ՝ «Ներառական կրթության» հայալեզու դասագիրք: Հատուկ կրթություն ստացող ուսանողների և ոլորտի մասնագետների համար դասագիրքն իսկական նվեր կլինի:

Վերանայվում են նաև Հատուկ կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից դասավանդվող «Ներառական կրթություն» առարկայացանկի թեմաները, մոդուլներն ու բովանդակությունը, մշակվում են նաև թեմատիկ վեբի-

նարների փաթեթներ, որոնք տեղ կգտնեն երկու համալսարանների պաշտոնական կայքերում:

Այցը հագեցած է եղել հանդիպումներով. պատվիրակությունը հանդիպել է Մինեսոտայի նահանգի կրթության վարչության Հատուկ կրթության ոլորտի տնօրեն Ռոբին Վիդլիին և նրա աշխատակազմին: Կլոր սեղան-քննարկումների ընթացքում հայկական կողմը ներկայացրել է Հայաստանում կրթական համակարգի յուրահատկությունները, հատուկ և ներառական կրթության համատեքստում Մանկավարժական համալսարանի առանձնահատուկ դերը՝ Հայաստանում կրթական ոլորտում իրականացվող բարեփոխումների համար արժանանալով ամերիկացի գործընկերների բարձր գնահատանքին:

Հավելենք, որ հայ-ամերիկյան համագործակցությունը մեծապես կայանում է հայաստանյան ՄԱԿ-ի գրասենյակի ՅՈՒՆԻՍԵՖ մանկական հիմնադրամի աջակցությամբ:

Ուսուցչի աշխատանքը պատվաբեր է

«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ». Լև Տոլստոյի այս խոսքերով էլ առաջնորդվելով՝ տարբեր բուհերի մի խումբ շրջանավարտներ իրենց մագիստրոսական կրթությունը որոշեցին Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետում շարունակել:

Նելլի Քոչինյանը տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 1-ին կուրսի ուսանող է: Առաջին մասնագիտությունից հետո անցել է 13 տարի, որից հետո նա որոշել է շարունակել կրթությունը, և ստանալ իր համար ցանկալի և սիրելի մանկավարժի մասնագիտացումը: «Սիրում եմ երեխաներին, նրանց հետ աշխատել, սիրում եմ մանկավարժի մասնագիտությունը: Երկար դադարից հետո իմ մեջ ուժ գտա, ինքնադրսևորվեցի և ընդունվեցի Մանկավարժական համալսարան»,- ասաց Նելլին և հավելեց, որ սերը մանկավարժության հանդեպ աճել է նաև իր երկու բալիկների լույս աշխարհ գալու հետ: Իր առաջին մասնագիտությունը՝ ֆիզիկական էլեկտրոնիկան, Նելլիին օգնում է երկրորդ մասնագիտության մեջ՝ հատկապես արագ կողմնորոշվելու և մտածելակերպի առումով:

«Գոհ եմ Մանկավարժական համալսարանից, նորարարական կրթական մոդելից, դասախոսներից և նրանց տված գիտելիքներից»,- ամփոփեց Նելլին, իսկ լավ մանկավարժ դառնալու համար կարևորեց. «Նախ և առաջ պետք է սիրես երեխաներին, մասնագիտությունդ և ողջ կյանքում սովորելով սովորեցնես»:

Նույն կուրսի ուսանողուհի Սիրվարդ Վարդանյանը լեզվաբան լինելուց բացի, մանկությունից ցանկացել է լինել նաև մանկավարժ: Անընդհատ պրպտումներից հետո որոշել է ի կատար ածել իր երազանքը և ընդունվել է Մանկավարժական համալսարան:

«Երեխաների հետ մեծ սիրով եմ աշխատում, նրանց հետ երեխա եմ դառնում»,- ասաց Սիրվարդը և հավելեց, որ ընտանիքի հետ դժվար է կրթություն ստանալ, սակայն, երբ ընտանիքդ սատարում ու օգնում է ամեն հարցում, դժվարությունները մնում են հետևում:

Խոսելով հայոց լեզվի մասին՝ լեզվաբանը նկատեց, որ հատկապես հեռուստատեսային այսօրվա լեզուն շատ է աղավաղված, իսկ ոսկեղենիկ հայոց լեզուն պահելու ուղին տեսնում է նաև մանկավարժների աշխատանքում. «Որպես ապագա մանկավարժ, ես ամեն բան կանեմ, որպեսզի մեր մատաղ սերունդը սիրի հայոց լեզուն, պահպանի այն, այսօր մեզանում պակասում է կիրթ խոսքը: Մանկավարժն այնքան կիրթ ու գրագետ պետք է լինի, որ երբևէ ինքն իրենից չամաչի և վստահի իր գիտելիքներին»,- ասաց Սիրվարդը:

Միջազգայնագետ Լուսինե Բաղդասարյանը մանկուց սիրել է մանկավարժի մասնագիտությունը, ծնվել է մանկավարժների ընտանիքում: Առաջին մասնագիտացումից հետո, դպրոցում աշխատելով որպես իրավագիտության առարկայի ուսուցչուհի, առավել խորացել է սերը մանկավարժության հանդեպ:

«Տարրական դասարանների երեխաների հետ աշխատելն ինձ համար ավելի հետաքրքիր է. նրանք պարզ են, մաքուր, անշահախնդիր, ստիպում են իրենց սիրես և նվիրվես: Լավ մանկավարժը նախ պետք է լավ գիտելիքներ ունենա, երեխայի հետ արդյունավետ կրթական գործընթաց իրականացնելու համար անհրաժեշտ է նաև երկկողմանի հարգանքի առկայությունը, երեխան պետք է հասկանա ու զգա, որ ուսուցիչը սիրում է իրեն ու հարգում: Այսօր մանկավարժի դերն ու արժեքը փոքր-ինչ նվազել է հասարակության մեջ, սակայն ես վստահ եմ, որ այն կվերականգնվի»,- ասաց Լուսինեն:

Նունե Ավագյանի համար մանկավարժի մասնագիտությունը նույնպես երկրորդ մասնագիտություն է, սակայն սիրված և սպասված: «Սերս ավելի է մեծացել մանկավարժության հանդեպ դասախոսներիս շնորհիվ, համալսարանը գեղեցիկ է, լի նորագույն տեխնոլոգիաներով ու մեթոդներով. բոլոր նախապայմանները ստեղծված են որակյալ կրթություն ստանալու համար»,- ասաց Նունեն:

Ուսանողները հատկապես կարևորեցին համալսարանում ներդրված Google Classroom էլեկտրոնային կրթական նոր համակարգը: «Այն հնարավորություն է տալիս նախօրոք ծանոթանալ դասախոսությանը, իսկ դասաժամն արդեն անցնում է ավելի ինտերակտիվ, քննարկում ու վերլուծում ենք նյութը»,- նշեցին նրանք և հավելեցին, որ կցանկանային, որ էլեկտրոնային համակարգում առաջադրանքները հանձնարարվեին թղթային տարբերակով, որն ըստ իրենց, առավել արդյունավետ կլինի: Տեղեկատվական տեխնոլոգիաների այս դարաշրջանում ուսանողները վստահ են, որ պետք է համացանցն ու գիրքը զուգակցեն միմյանց, այլ ոչ թե մեկը մյուսին փոխարինեն:

Ուսանողներն օգտվում են նաև բուհի ժամանակակից գերհագեցած գրադարանից և շատ են կարդում. չէ՞ որ մրցունակ մասնագետ դառնալու համար նախ և առաջ գիտելիք է պետք:

Երբեք հնարավոր չէ գերագնահատել այն դերն ու նշանակությունը, որն ունի ուսուցիչը սերունդների դաստիարակության գործում: Շատերն են ընտրում այս դժվարին ճանապարհը, բայց բոլորը չէ, որ կարողանում են պատվով կատարել իրենց վրա դրված պարտականությունները: Իսկ այս ուսանողները մագիստրատուրայի 1-ին կուրսի գերազանցիկներ են, նշանակում է՝ նրանք սիրում են իրենց մասնագիտությունը

Սոնա ԱՐԱՄՅԱՆ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բնազդի հետ ճիշտ բանականություն պետք է լինի:

📖

Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը:

📖

Գրականությունն ազգի հոգին է և գրողներն էդ հոգու ծնունդներն ու արտահայտիչները:

📖

Աշխատեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու ամենաբարի զգացմունքներով ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով:

📖

Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ հարուստ ու շքեղ աշխարհ: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում:

📖

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ:

📖

Արվեստը պետք է լինի աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ:

📖

Գրել անկեղծ ու կենդանի լեզվով՝ դրանում է գրողի գլխավոր արժեքը:

📖

Գեղեցկություն, բարություն, ճշմարտություն, սրանք են կյանքում հիմնականը:

Մեծ գաղափարները մարդկանց մեծացնում են, զորացնում, ազնվացնում են… Բայց դրա համար պետք է մարդու գլուխը էնքան մեծ ու բանական լինի, որ մի մեծ գաղափար մտնի նրա մեջ ու մերվի: Դժբախտաբար մեծ մասամբ էդպես չի լինում, գաղափարը չի մտնում գլխի մեջ, այլ գլուխն է մտնում գաղափարի մեջ…

📖

Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա՝ իր ճամփան անմոլոր գնալու համար:

📖

Թարգմանությունը ապակու տակ դրված մի վարդ է:

📖

Երեք բան երբեք չեն վերադառնում՝ արձակված նետը, ասված խոսքը և անցած օրերը:

Վեներա ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ես չգիտեմ քեզ պես ուրիշ բանաստեղծ,
Քեզ պես հոգնած, քեզ պես մենակ ու տոկուն,
Որ տապակվեր խառնարանում ցավերի՝
Իր ժպիտը դարձրած թանձր վարագույր:
Ես չգիտեմ քեզ պես ուրիշ բանաստեղծ,
Որ մարդու մեջ մարդուն տեսներ շարունակ:
Մարդ մնալու պատգամ վառեր մեր սրտում՝
Մարդուց խոցված սիրտը նեցուկ ու հենակ:
Ցեղին սրտի ցավը կրեր իր հոգում,
Ամենայն տեղ Ամենայն հայը մնար,
Քաղաքական բքերի մեջ՝ իմաստուն,
Ազգի հոգսից ու ցավերից կռանար:
Օրը՝ խավար, իսկ դու արև ձառագուն՝
Աստծո աջի հանձարեղ փայլը վրան:
Հուսալքման տոթից թեև շնչահեղձ,
Սուգի մեջ էլ՝ հույսի կանթեղը վառման:
Քո սիրտը միշտ լեռներում էր դեգերում՝
Հայրենի տան աղոթքներին մտերիմ:
Ննջիր որպես խաղից հոգնած մի մանուկ՝
Դեռ անտեղյակ էս աշխարհի ցավերին:

Ուսանողի օրագրից

Ամենատպավորիչ հիշողությունները Էջմիածնից

Սիրելի՛ ընթերցող, ես այսօր պատմելու եմ մի փոքրիկ, բայց շատ հաճելի, տպավորություններով հարուստ էքսկուրսիայի մասին: Էքսկուրսիան Էջմիածնի Մայր Տաճարում Վարդանանց տոնին նվիրված միջոցառմանը ներկա լինելու նպատակ ուներ: Կեսօրից հետո բոլորս մեկ մարդու նման հավաքվել էինք համալսարանի բակում, որ ճանապարհ ընկնեինք: Ճանապարհն անցավ հաճելի զրույցներով, մեր դասախոս Ավետիս Հարությունյանը ճանապարհին գտնվող տեսարժան վայրերն էր ներկայացնում:

Երբ ես փոքր էի, երազում էի այցելել Մայր Աթոռ սուրբ Էջմիածին և ծանթանալ համալիրի բոլոր շինություններին: Եվ ահա, երազանքս կատարվեց…

Պարոն Ա. Հարությունյանի շնորհիվ, ով նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս է, մտանք ճեմարան, եղանք լսարաններում և ուսուցչանոցում, ծանոթացանք Ռումինիայից ժամանած Ջորջ Դամյանի հետ: Վերջինս Հայաստանում կարճ ժամանակամիջոցում յուրացրել է հայերենը, նույնիսկ յուրացրել է երևանյան ժարգոնը:

Այնուհետև ներկա եղանք Վարդանանց տոնին նվիրված միջոցառմանը: Հաճելի զգացողություն էր, երբ 40 և ավելի տղաներ առանց նվագակցության կատարում էին հայկական մեղեդային շարականները:

Այստեղ մենք տեղեկացանք, որ Մայր Տաճարի գմբեթին կա Շահ-Աբասի գլխի քանդակը. հայերը դա արել են պարսկական տիրապետության ժամանակ, որպեսզի պարսիկները չքանդեն տաճարը: Մայր Տաճարը կառուցված է 12 ջրհորների վրա, որպեսզի երկրաշարժի ժամանակ չքանդվի: Սակայն այսօր արդեն մնացել է ընդամենը երկու ջրհոր: Մեզ թույլ տվեցին խմել այդ սրբազան ջրից, տեսանք շրջապատի հուշարձանները, մեր գիտելիքները հարստացրինք նոր տեղեկություններով, լուսանկարվեցինք ու ամենավառ տպավորություններով վերադարձանք:

Արաքսյա ԱԶԻԶՅԱՆ
Պատմության և Իրավագիտության ֆակուլտետ,
պատմություն մասնագիտության 1-ին կուրս

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԻ ՀԵՏ

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետը կազմակերպել էր հանդիպում ժամանակակից արձակագիր Գրիգի հետ: Թեման գիրքն էր և գրականությունը: Մինչ քննարկմանն անցնելը հեղինակը ներկայացրեց իրեն, այնուհետև ծավալվեց զրույց գրող-ընթերցող շրջանակում: Երիտասարդ գրողը հանգամանորեն պատասխանեց ուսանողներին հետաքրքրող հարցերին: Հարցերի բնույթը բազմազան էր՝ սկսած ժամանակակից գրականության հիմնախնդիրներից մինչև հայ և համաշխարհային գրականություն: Անդրադարձ կատարելով «Հիսուսի կատուն» ժողովածուին՝ Գրիգը այն համոզմունքն արտահայտեց, թե այնուամենայնիվ գրքում փոփոխություններ չէր կատարի. «Մանկությունը չեն խմբագրում, գիրքը իր թերություններով և առավելություններով հանդերձ այն է, ինչ ուզել եմ գրել»:

Հանդիպում-քննարկումն անցավ գիտելիքաշատ ու գիտելիքով առատ մթնոլորտում:

ՀԵՐԹԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ



Մանկավարժական համալսարանի երաժշտության ամբիոնի դոցենտ Գայանե Հեբոյանն արդեն երեք տասնամյակ դասավանդում է բուհում: Տարիների ընթացքում նա ունեցել է հաջողություններ և արժանացել է ամենատարբեր մրցանակների: Հերթական ձեռքբերումն էլ գիտամանկավարժական տքնաջան աշխատանքի արդյունք էր. գիտամանկավարժական արգասաբեր գործունեության համար նրա անունն այսուհետ «Լավագույն մարդիկ. կրթության ոլորտի լավագույնները» միջազգային մեծ հանրագիտարանում է:

2017-2018 թվականների հատորյակում տեղ են գտել Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի շուրջ 15 000 նվիրյալների անուններ, որոնք կրթության, մշակույթի, արվեստի, սպորտի և այլ ասպարեզներում ունեն նշանակալի ձեռքբերումներ:

Ձեռնարկում ներկայացվել է Գայանե Հեբոյանի կյանքը, մանկավարժական և ստեղծագործական գործունեությունը. հանրագիտարանը բացահայտում է տարբեր ոլորտների երախտավորներին, նրանց հաջողությունները:

«Ինձ համար մեծ պատիվ է ներգրավվել մի գրքում, ուր շատ տարիներ առաջ տեղ է գտել նաև աշխարհահռչակ Արամ Խաչատրյանի անունը»,- խոստովանում է Գ. Հեբոյանը՝ վստահեցնելով, որ ամեն օր լսարան է մտնում ուսանողներին նոր բան սովորեցնելու և սովորելու ցանկությամբ, նաև հպարտորեն փաստում է, որ տարբեր տարիների իր շրջանավարտներն աշխատանքի են անցնում երաժշտական դպրոցներում, ղեկավարում խմբեր և անաղարտ պահում ազգային երաժշտարվեստի ակունքները:

Նշեցին ռուսական տոնը

Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողները յուրահատուկ անակնկալ էին պատրաստել ներկաների համար. հայկական ոգով ու հյուրասիրությամբ ուսանողները նշեցին ռուսական Մասլենիցա տոնը: Ուսանողները ներկայացրին տոնի խորհուրդն ու ավանդույթները: Մասլենիցան, ինչպես Բարեկենդանը, նշվում է Մեծ պահքին նախորդող շաբաթը: Հնում այս տոնով մարդիկ հրաժեշտ էին տալիս ձմռանը՝ այրելով ավելորդ և անպետք իրերը, որտեղից էլ ծագել է խրտվիլակ այրելու հնագույն սովորույթը: Խրտվիլակի հետ նրանք այրում, ոչնչացնում էին անցյալ տարվա բոլոր անհաջողություններն ու տհաճությունները, որպեսզի գարնան հետ նոր կյանք սկսեն: Հետագայում ժողովրդական սիրված այս տոնին նոր բովանդակություն ու նշանակություն են հաղորդել:

Ուսանողները ներկայացրին Մասլենիցայի շաբաթվա օրերի նշանակությունը, երգեցին խորհրդանշական երգեր, իսկ վերջում, Մասլենիցայի ավանդույթի համաձայն, կազմակերպիչները ներկաներին հյուրասիրեցին իրենց պատրաստած ռուսական տոնական ուտեստներով:

Ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս, միջոցառման նախաձեռնող Արմեն Հակոբյանը նկատեց, որ արդեն ավանդույթ է ձևավորվել ամբիոնում նշել ռուսական մի քանի նմանօրինակ տոներ: «Նման ձեռնարկները նպատակ ունեն ուսանողներին ծանոթացնել այլ ազգերի մշակույթներին և ավանդույթներին, լայնացնել ուսանողների աշխարհայացքն ու ավելի տեղեկացված դարձնել նրանց»,- ասաց Ա. Հակոբյանը:

Ուսանողների համար կարևորելով նման միջոցառումների անցկացումը՝ ամբիոնի վարիչ Իննա Սարկիսյանն ընդգծեց. «Սա հետաքրքիր ու կարևոր նախաձեռնություն է, քանի որ ուսանողները նշում են այլ ազգերի տոները՝ միաժամանակ բացահայտելով այդ տոների խորհուրդն ու պատմությունը: Մենք մեր միջավայրում նշում ենք միայն հայկականը, շրջապատված ենք մեծամասամբ հայերով, իսկ նման ձեռնարկները միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից կարևոր են: Միայն քերականական կանոններ սովորելը դեռևս լեզվի ուսումնասիրություն չէ, պետք է հաղորդակից լինել նաև այդ ազգի մշակույթին և սովորույթներին»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Հասմիկ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, հեռակա 4-րդ կուրս

***

Մեր կյանքը գետ է. հոսում է արագ
Ու գետի նման էլ ետ չի դառնում,
Հոսում է առատ, հոսում է բարակ
Ու ջրերն ափից հեռու է տանում:
Տանում է խառնի ուրիշ ջրերի,
Տանում է խփում ուրիշ ափերի,
Անհանգիստ հունով ճամփա է փնտրում
Եվ օվկիանոսում հանգրվան գտնում:

***

Քեզնից անկախ ու առանց քեզ
Կյանքս դարձավ անվերջ կռիվ,
Պայքարում եմ ինքս ինձ հետ,
Որ առանց քեզ ժպտամ կրկին…

Քեզնից հետո ու առանց քեզ
Սիրտս դարձավ մի ավերակ,
Որտեղ մի մեծ, անանց կարոտ
Բույն է դրել անհիշատակ…

Քեզնից հետո ու առանց քեզ
Ես մնացի միայն քեզ հետ…

***

Քո կամքից անկախ ու քեզնից անկախ
Դու հայտնվեցիր հոգուս տիրույթում…
Եվ դա շատ լավ է…
Արդյոք դա լա՞վ է…
Այնտեղ փոխել ես գույնը պատերի,
Ստվարագծել վարագույրները,
Դուռը կիսաբաց թողել երևի,
Որ տարուբերի քամին ամեհի,
Կամ էլ ներս մտնի շողը արևի…
Անկախ քո կամքից մտար հոգուս մեջ
Ու սնդիկային քո շարժունությամբ
Ընդարձակվում ես, տարածվում իմ մեջ,
Հենց որ լցվում է հոգիս ջերմությամբ:
Քո կամքից անկախ ու ինձնից անկախ
Մի տեսակ դարձար հարազատ այնպես,
Որ էլ չգիտեմ՝ լա՞վ է դա, թե՞ վատ,
Կկարողանա՞մ առանց քեզ ապրել…

***

Մենք հանդիպեցինք և մտերմացանք,
Բայց կարող էինք և չհանդիպել,
Բայց հանդիպեցինք և մտերմացանք,
Որ կարող էինք և չհանդիպել:

Ոչինչ չէր լինի չհանդիպելուց,
Երկինքս միայն խամրած կմնար,
Քո լույսը այնտեղ լոկ կպակասեր,
Ոչինչ չէր լինի չհանդիպելուց…

Պարզապես քունը չէր փախչի ինձնից,
Սիրտս չէր լսի մեղավոր ձայներ,
Հոգիս չէր զգա անծանոթ ցավեր
Անհնարինի այս սպասումից:

Ո՞վ եմ ես արդյոք կյանքիդ երկնքում,
Չգիտեմ… չեմ էլ ուզում իմանալ,
Բայց դու փայլում ես հոգուս տիրույթում,
Հաճելի է քո լույսով հիանալ:

Ժան Կոկտոյի պիեսի մոտիվներով

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառեժիսուրա մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները փետրվարի 10-ին Մասիսի երիտասարդական մշակութային կենտրոնի հետ համատեղ ներկայացրին ֆրանսիացի դրամատուրգ Ժան Կոկտոյի «Ձայն մարդկային» պիեսը: Բեմադրության հեղինակը Մանկավարժական համալսարանի մագիստրատուրան գերազանցությամբ ավարտած, հեռուստառեժիսուրայի ամբիոնի պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանի սան Մարինա Գասպարյանն էր, ով պրակտիկայի ընթացքում պրոֆեսորի ղեկավարությամբ բեմադրեց ֆրանսիացի հեղինակի գործը:

Մասիսի զարգացման հիմնադրամի տնօրենը շնորհակալագիր է ուղարկել Մանկավարժական համալսարանի ղեկավարությանը՝ Մասիսի զարգացման կենտրոնի հետ մշակութային համատեղ ծրագիր իրականացնելու համար:

Մշակութային հանդիպմանը ներկա էին մի շարք պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարը, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանը, Ֆրանսիական համալսարանի ռեկտորը: Նրանք բարձր գնահատեցին ուսանողների դերասանական վարպետությունն ու մասնագիտական հմտությունները:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 06.03. 2018 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ